

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
МЭРИЯ Г. ТАШИР
МЭՐ

ք. Տաշիր, քաղաքային հրապարակ
հեռ. 2-22-41,2-25-77

г. Ташир, городская площадь
тел.2-22-41,2-25-77

N 956 -19
17 հունիս 2019թ.

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ուղարկում ենք ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի NN 519-Ա-523-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կապ.՝ Լոռնե Սոլոյան
(0254) 2-21-68



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-519-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

07 հունիս 2019թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ, հիմք ընդունելով Տաշիր համայնքի աճուրդային և մրցության հանձնաժողովի 2019թ. հունիսի 7-ի N1 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող քաղաք Տաշիր, Բաղրամյան փողոց, թաղամաս 14, թիվ 1/2 հասցեում գտնվող 459,16 քմ մակերեսով գրասենյակը 1168500/մեկ միլիոն հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով օտարել Տաշիրի համայնքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Վահրամ Վանոյի Բեգոյանին:
2. Գրասենյակի սպասարկման համար անհրաժեշտ 810,2 քմ մակերեսով հողամաս /վկայական N18092018-06-0029, կադաստրային ծածկագիր՝ 06-008-0501-0008/ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով 179865 ՀՀ դրամով
2. Վահրամ Վանոյի Բեգոյանի հետ կնքվել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 7
ք. Տաշիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-520-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

10 հունիս 2019թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետը և 48 -րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0103-0031 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Զահուկյան փողոց, թիվ 25 մանկապարտեզ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 10
ք. Տաշիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-521

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

10 հունիս 2019թ.

**ՏԱՇԻՐ /ԿԱԼԻՆԻՆՈ/ ՔԱՂԱՔԻ ԿՐՈՒՊՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԵՆ ԿԱՌԼԵՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Կառլենի Նազարյանի /անձն ա գ ի ռ՝ AP0530508, տրված՝ 09.09.2016թ./ դիմումը, 1986թվականի ապրիլի 2-ին կազմված տեխնիկական պասպորտը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 2008թվականի դեկտեմբերի 22-ին հաստատված ժառանգական գործի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը թիվ 113-ը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387- Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 0,07հա և կից 0,05936 հա հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Տնատիրության զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,12936 հա : Հաշվի առնելով այն, որ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1990թ-ին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաք, Կրուպսկայա փողոց, թիվ 18ա /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0272-0003/ հասցեում գտնվող

0,12936 հա հողամասի նկատմամբ, որից ըստ փաստաթղթերի 0,07 հա հողամասի մինչև 20 տոկոսը գերազանցող հողամասը կազմում է 0,084հա:

2. Ըստ չափագրման արդյունքների հողամասի 20 տոկոսը գերազանցող 0,04536հա հողամասը ուղղակի վաճառքով տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով, ընդամենը 30210 դրամով օտարել Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյաններին:
3. Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Հողամասի չափերը որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Ճանաչել Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաք, Կրուպսկայա փողոց, թիվ 18ա /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0272-0003/ հասցեում գտնվող 0,12936 հա մակերեսով հողամասի վրա գտնվող բոլոր շենք- շինությունների նկատմամբ՝ համաձայն ներկայացվող շենք-շինությունների բնութագրի:
6. Տնատիրությանը ք. Տաշիր /Կալինին/ Կրուպսկայա փողոց, թիվ 18ա հասցեի փոխարեն տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 13-րդ թաղամաս Բաղրամյան փողոց, թիվ 18/1 բնակելի տուն հասցեն:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթա են գրանցմանը ՀՀ ԱԳ կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 10
ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ԿԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-522-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

11 հունիս 2019թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԿԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի N 104-Ն որոշման 8.2 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բաժին 5, խումբ 6, դաս 1- ի 4269 հոդվածից 1000,0 հազար ՀՀ դրամ տեղափոխել բաժին 5, խումբ 6, դաս 1- ի 4239 հոդված:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2019թ. հունիսի 11
ք. Տաշիր



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԻ ԽԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-523-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

12 հունիս 2019թ.

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/63» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 6-ի N4 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեից ստացված եզրակացությունը, 05.06.2019թ. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ ճշտված տեղեկատվությունը և այն, որ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման ապահովումը սահմանված ժամկետում ներկայացվել է.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար բենզինի մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/63» ծածկագրով գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է.ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 12
ք. Տաշիր